



Ս. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Ծք. 1 Յուն.— Ս. Արգարու թագաւորին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Կիր. 2 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Դշ. 6 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած հանդիսատր նախատօնակին, որմէ ետք Ս. Աթոռի «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան: Այսպէտով կատարուեցաւ բացումը Ս. Ծննդեան տօնը կանխող աւագ տօներուն:

* Եշ. 6 Յուն.— Ս. Դաթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր առաքելուն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյն Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը զգետաւորուած բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին, ուր մնաց մինչև ժամերգութեան աւարտը, երբ ընդունեց Միաբանութեան շնորհատրութիւնները: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնատր բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Ամենապատուութեան արևշատութեան համար: Նոյնը ըրաւ օրուան պատարագիչը՝ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան, Մայր Տաճարին մէջ մատուցած իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագի ընթացքին: Գերշ. Արքագանը խօսեցաւ օրուան տօնելի սուրբերուն — Երուսաղէմի առաջին թագաւորին և առաջին պատրիարքին — մասին, ծանրանալով մանաւանդ Ս. Աթոռի մեր ազգային կեանքէն ներսունեցած դերին ու կարևորութեան վրայ: Քարոզէն ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռի հանգուցեալ Պատրիարքներու հոգիներուն համար:

* Որ. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի հանդիսատր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Տօնին բուրվառակիրներն էին Հոգշ. Տ. Սևան Վրդ. և Հոգշ. Տ. Գեղարդ Արդ.:

* Ժք. 8 Յուն.— Ս. Ստեփանոսի նախատարկաւագին և անաջին մարտիրոսին: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Աթոռոյն

երկու սարկաւագներն ու ինը ուրարակիրները, մարգարտազարդ սաղաւարտներով և տապանակ ու բուրվառ ի ձեռին, և առաջնորդութեամբ երկու բուրվառակիր չոզեշնորի Հայրերուն, պանծացոցին յիշատակը իրենց մտատիպարին: Հանդիսապետն էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աանդատան Ս. Ստեփանոսի մատուոին աւագ ւեղանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուղարեան:

* Կիր. 9 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուոին մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան: Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ:

— Գլխաւոր առաքելներու՝ Պետրոսի և Պողոսի հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէանի:

* Բշ. 10 Յուն.— Ս. Առաքելոցն Պետրոսի և Պողոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատուոին մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

— Վաղուան Որդոց Որոտման տօնին առիթով, կէսօրէ ետք ժամը Յին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ի գլուխ Միաբանութեան, «Հրաշահատ»ով մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճար, ուր նախագահեց հանդիսաւոր նախատօնակին և թափօրով բարձրացաւ Պատրիարքարան, երգեցողութեամբը Ս. Աթոռի շարականին:

* Բշ. 11 Յուն.— Տօն Ս. Ողոցն Որոտման, Յակոբայ Գլխաղի առաքելոյն և Յովհաննոս աւտուածարան անտարանչին: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխաղի մատուոին մէջ մատուց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, և ապա, ամպհովանիի ներքև և Կենաց Փայտի մատուքն ի ձեռին նախագահեց երրադարձ մեծահանդէս թափօրին: Արարողութեանց աարտին, Միւսբանութիւն և ժողովուրդ Ս. Աթոռի շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարանի դահլիճը, ուր Ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի օրհնուած նշխարներ բաժնեց բոլորին:

* Որ. 14 Յուն.— Նոր Տարի (ըստ Հին Տոմարի): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց ժամօրհնողը՝ Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան: Ապա, Ս. Աթոռի շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Ս. Թարգմանչաց Մանկապարտեզի ասնի մը և ասնուհիի մը ծաղկեփունջով Ն. Ամենապատուութեան Կենաց և արևշատութեան համար արտասանուած գողորիկ ողերձէն ետք խօսք առաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, և Նոր արուայ պատշաճ խորհրդածութիւններէ ետք բոլորին մէկական նարինջ բաժնեց:

* Եր. 15 Յուն.— Ս. Բարսի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղի մատուոին մէջ: Ժամաբարն էր Ֆրանսայէն Ս. Աթոռ ժամանած Ս. Ռիստի Միաբան Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Թօփառեան:

* Կիր. 16 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Յովհ. Մարտիրոսի խորանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Գշ. 18 Յուն.— Երագալոյց Ս. Ծննդեան: Առատօտեան ժամը 10-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը, ինքնաշարժներու պատկառելի շարանով մը, ճամբայ ելաւ Մայրավանքի դռնէն դէպի Ս. Ծննդեան բարաքը՝ Բերդեհէմ: Պայծառ էր երկինքը, բայց ձմեռնային քամին երբեմն խտօրէն կ'ուժեղանար: Ժամբու կէսին, Յունաց Ս. Եղիա վանքին մօտ,

կատարուեցաւ ասանդակակն դիմատրութիւնն ու ընդունելութիւնը, որմէ ետք ճամբան շարունակելով ժամը 11.30ին Ս. Ծննդեան հրապարակ հասան բոլորն ալ և Հայ թէ օտար արհմերու և արեւունշներու խումբերէ առաջնորդուած՝ Ն. Ամենապատուութիւնը և իր շքախումբը լսառջացան դէպի Տաճարը, իրենց կողքին ունենալով հերթեհէմի Քաղաքապետն ու Զինուորական Կառավարիչը: Ապա «Խորհուրդ մեծ»ի երգեցողութեամբ բարձրացան մեր վանքը:

— Կէսօրէ ետք ժամը 2.20ին, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճեմեանի գլխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար: Ս. Այրի ուխտէն ետք, Տաճարի մեր բաժնին մէջ պաշտուեցան Ճաշու և երեկոյեան ժամերգութիւնները: Ապա կատարուեցաւ Ծրագալոյցի արարողութիւն, որուն աւարտին Ս. Այրին մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուարեան: Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեանի գլխատրութեամբ պաշտուած Ս. Ծննդեան նախատօնակէն ետք Միաբանութիւնը «Խորհուրդ մեծ» շարականը երգելով բարձրացաւ մեր վանքը, որու արտաքին գաւթին մէջ կատարուած Ս. Աւետարանի ընթերցումէն և «Փառք ի բարձունս»ի երգեցողութենէն ետք բոլորն ալ նստան ընթրիքի:

— Գիշերուան ժամը 10.30ին, Տաճարի հայկական բաժնին մէջ ընթացք առին գիշերային և առաօտեան ժամերգութիւնները:

* Դշ. 19 Յուն.— ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ և ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՈՒՆ: Կէս գիշերին, խորհրդատր զանգահարութենէ մը ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխատրութեամբ, ամբողջ Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այրը, ուր կատարուած արարողութիւնները, մօտ մէկ ժամ, ձայնատիտուեցան Խորալէի ռատիոկայանէն: Այդ միջոցին Ն. Ամենապատուութիւնը տուաւ համայն Հայութեան ուղղուած իր պատգամը, որ կ'երևի Սիոնի ներկայ թիւին մէջ: Անկէ անդին մատուցուեցան զոյգ Ս. Պատարագներ, առաջինը հայկական բաժնին մէջ՝ Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեանէ, իսկ երկրորդը՝ առաօտեան ժամը 4ին, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեանէ, Ս. Ծննդեան Այրին մէջ: Երկու պատարագներուն միջև կատարուեցաւ «Զորհնէք»ի հանդիսատր արարողութիւն: Առաօտեան դէմ, արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը երէնուան նման թափօրով բարձրացաւ մեր վանքը, ուր բոլորն ալ նստան նախաճաշի: Քիչ ետք պաշտօնապէս վերադարձան Երուսաղէմ: Թէ՛ երէկ և թէ՛ աւօր, Ս. Աթոռոյս երկսեռ երգչախումբը, ղեկավարութեամբ Պր. Սահակ Գալստեանի, կատարեց երգեցողութիւնները:

— Կէսօրէ ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

* Եշ. 20 Յուն.— Յիշատակ մտելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Թօփալեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեանի:

— Իսկ Երուսաղէմի մէջ, Ծրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի կէսօրէ ետք, Ս. Յարութեան Տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, ուր Ս. Պատարագը մատուց Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ս. Ծրննդեան նախատօնակին նախագահեց Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատրեան:

— Իսկ Զորեքշաբթի առաօտեան ժամը 5ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ առաօտեան ժամերգութիւն: Ս. Պատարագը Ասագ Սեղանին վրայ մատուց, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց Վանքի Տեսուչը՝

Հոգ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան, որ և նախագահեց «Զորահնէք»ի սրտագրաւ արարողութեան:

— Թէ՛ երէկ և թէ՛ այսօր, ի բացակայութեան Ժառանգատր սաներու, տնդացի դպիրներ վարեցին եկեղեցական երգեցողութիւնները:

* Եր. 22 Յուն.— Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Աստուծածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 23 Յուն.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Գշ. 25 Յուն.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Գշ. 26 Յուն.— Տօն Անուանակոչութեան Տեան: Առաւօտեան ժամը 8.30-րն, հիրարար Ս. Աթոռ գտնուող Ռումանիոյ և Պուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեանի գլխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Սրբազանը մատուց օրուան հանդիսատր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և կոտրարձով մը յորդորեց հաւատացեալները հաւատարիմ մնալ իր ազգային աւանդութիւններուն և ունենալ բարձր գիտակցութիւնը մեր ազգային արժանիքներուն: Ս. Պատարագէն ետք, Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքէն, Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Ամեն. Պատրիարք Հօր գլխատրութեամբ կատարուեցաւ Տնօրհնէքի արարողութիւն: Օրհնուեցան Ս. Աթոռոյս բարիքները և երգուեցան Ս. Ծննդեան և Մկրտութեան շարականներ: Յետոյ, փոքր թափօր մը, գլխատրութեամբ Ժամօրհնող Հոգ. Տ. Ռուբէն Արեղայի, մեկնեցաւ Վանքի սեղանատունն ու խոհանոցը՝ ուր կատարուեցաւ նմանօրինակ արարողութիւն և ի միջի այլոց օրհնուեցաւ օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը:

— Յովհաննու Կարապետի ծննդեան նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

* Եշ. 27 Յուն.— Տօն Ծննդեան Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Յովհաննու Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Եր. 29 Յուն.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառույարեան:

* Կիր. 30 Յուն.— Բարեկենդան Առաջատրի պահոց: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Ուր. 4 Փետր.— Յիշատակ Յովնանու մարգարէին: Առաւօտեան ժամերգութեան ատարտին, Մայր Տաճարին մէջ կարդացուցաւ Յովնանու մարգարէութեան Գիրքը:

— Ս. Սարգսի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Եր. 5 Փետր.— Ս. Սարգսի գօրավարին: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռիս և ազգիս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Պէյ Կիլիպէնկեանի հօր՝ Սարգիս Կիլիպէնկեանի հոգուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի:

* Կիր. 6 Փետր.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի

վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նագարեան:

* Շք. 12 Փետր.— Ս. Իսահակայ Պարթևի հարթապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 13 Փետր.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Դշ. 16 Փետր.— Վարդանանց հանդիսատր նախատօնակը պաշտուցուցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Եշ. 17 Փետր.— Ս. Վարդանանց զօրավարացն մերոց 1036 վկայիցն (Յիշատակ մտելոց եւ տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ս. Պատարագը մատուց, ըստ սովորութեան, Ժառանգատրաց Վրժ.ի եւ Ընծայարանի Փոխ Տեսուչը՝ Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառտարեան: Այս տօնը Ս. Աթոռիս մէջ ժառանգատր սաներու տօնը նկատուած ըլլալուն՝ անոնք, իրենց մէջէն ընտրուած դասապետներով ղեկավարեցին օրուան երգեցողութիւնները եւ Ս. Հաղորդութիւն ստացան: Գերշ. Տ. Կիրէղ Եպս. Գաբիկեան բարոզեց Վարդանանց շրջանը կանխող անցուդարձերու եւ անոնց նահատակութեան բարոյական նշանակութեան մասին: Բարոզէն ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուցաւ «Հայրապետական Մաղթանք»՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի անուան տօնին առթիւ: Իսկ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Տ. Կիրէղ Եպիսկոպոս նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին:

* Որ. 18 Փետր.— Իրաական սովորութեան համաձայն, Ս. Պատարագ մատուցուցաւ Ասորիներու Ս. Մարկոս Անտարանչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիրէղ Եպս. Գաբիկեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը հիրաւիքուցաւ Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսէն:

* Շք. 19 Փետր.— Վ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին Մայր Տաճարի խորաններն ու զըլխատր սրբանկարները վարագորուցան:

* Կիր. 20 Փետր.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նագարեան:

* Դշ. 23 Փետր.— Սկիզբ կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուցան «Արեւագալ»ի, իսկ կէսօրէ ետք՝ «Ժաղաղական»ի առաջին ժամերգութիւնները:

* Որ. 25 Փետր.— Նախատօնակը պաշտուցուցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ, որ Ձեռագրատունն է Ս. Աթոռիս: Հանդիսապետն էր Ձեռագրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Շք. 26 Փետր.— Ս. Թեոդորոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուցուցաւ եւ Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Դարիպեան:

— Վաղուան Արտաքսման Կիրակիի առիթով, կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուցան երեկոյեան ժամերգութիւնն ու Տեսուչընդատաջի նախատօնակը՝ վերնատան մեր մատուռին մէջ: Յետոյ կա-

տարուեցաւ «Անդաստան» եւ մոմսվառութիւն՝ նախագահութեամբ Նորին Ամենապատուութեան: Ապա կատարուեցաւ Տնօրինական արքայտէղեաց այցելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տաճարին Տեսուար՝ Հոգձ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:

— Գիշերակիզքին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեացէ՛՛հ եւ Հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

— Հսկումէն ետք, Ժառանգաւորաց Վարժարանի մարզադաշտին վրայ կը փառէր Տեսունընդատացի աւանդական կրակը, որուն շուրջ եղանակին համար անսովոր գարնանային օդը հաւաքած էր ամէն սեռէ ու տարիքէ հետաքրքիրներու բազմութիւն մը: Կրակին շուրջ սարքուեցան իրախնամանական տեսարաններ:

* Կիր. 27 Փետր.— Տեսունընդատաց եւ Արտաքսման Կիրակի: Գիշերափին եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգձ. Տ. Գեղարդ Արդ. Տառնուարեան: Ս. Յակոբեանց երկստեղ երգչախումբը, ղեկավարութեամբ Դպրապետ Պր. Սահակ Գալայճեանի, կատարեց Ս. Պատարագի երգեցողութիւնները: Ապա կատարուեցաւ երրարարձ մեծահանդէս թափօր՝ Բրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատէղիին շուրջ՝ գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Թափօրի ընթացքին երգուեցան Այալկերպութեան շարականներ:



* Կիր. 28 Փետր.— Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեացէ՛՛հ եւ Հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

* Կիր. 29 Փետր.— Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեացէ՛՛հ եւ Հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

* Կիր. 30 Փետր.— Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեացէ՛՛հ եւ Հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

* Կիր. 31 Փետր.— Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեացէ՛՛հ եւ Հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

Պ ԱՆՏՈՆԿԱՆԷՐ



* Եր. 8 Յուն.— Օրթոտոքս եկեղեցիի Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ի գոյն Միաբանութեան, շնորհատրական այցելութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին: Յետոյ, Գերշ. Տ. Կիրեղ Եպս., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, նոյն առթիւ այցելեց Հապէշներու և Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսներուն:

* Դշ. 12 Յուն.— Բերդեհէմի Զին. Կառավարիչը այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Վօտակալ Ս. Ծննդեան տօնին առիթով կարգադրութիւններու համար խորհրդակցելու:

— Նոյն օրը Ս. Աթոռ ժամանեց Ռումանիոյ և Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրար Եպս. Մարտիկեան և Ս. Ծննդեան տօնի արարողութիւններուն իր մասնակցութիւնը բերելէ ետք մեկնեցաւ Պուրշէ՝ 28 Յունուարին:

* Եշ. Յուն.— Մեր Ս. Ծննդեան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Պատրիարքարան շնորհատրական այցի եկան յաջորդաբար Յունաց Պատր. փոխ. Գերշ. Տ. Բօսթանթին Եպս., Լատինաց Պատրիարք Սօնս. Տ. Ծիարօսօ Պէլթրիթի և Ֆրանչիսկեաններու Կիւսթօտի փոխանորդը՝ իրենց Միաբանութեան անդամներով, Ասորիներու Եպիսկոպոսը, Ռուսաց Մեծատրը, Հայ Կաթողիկէներու Մեծատրը, Լուտերականներու և Արաբ Լուտերականներու Երէցները և այլ ականաւոր անձնաւորութիւններ:

* Որ. 21 Յուն.— Նոյն առթիւ, Բաղաբիս հիպատոսական անձնակազմը Պատրիարքարան եկաւ շնորհատրութեան:

— Նոյն օրը, Հապէշներու Գերշ. Եպիսկոպոսը, իր միաբանութեան անդամներով, ինչպէս նաև Բերդեհէմի Վեմ. Բաղաբապետը՝ Էլիաս Ֆրէժ, նոյն առթիւ շնորհատրութեան եկան Պատրիարքարան: